/ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

<ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ19/4> ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման որոշման մասին

ք.Էջմիածին 04.06.2019թ.

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և հրավերով սահմանված ժամկետում ներկայացված որակավորման չափանիշները հիմավորող փաստաթղթերի մասին

Ընդունել ի գիտություն՝

1.1 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել հաղթող մասնակցի՝ հայտերը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

1.2 ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526 -Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցում էր ուղարկվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերի պահանջի վերաբերյալ: Սահմանված ժամկետում և սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է որակավորման չափանիշները հաստատող փաստաթղթերը:

1.2.1Կնքվելիք պայմանագրի կատարման համար տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում Ֆրեզ /Բեռնիչ –NEW HOLLAMD L225,2014թ,/-ի համար իրավունքի տեսակը նշվել է վարձակալություն, սակայն տրանսպորտային միջոցի վարձակալության 1/Վ/2018 պայմանագրի 1.4 կետի նշված է , որ տրանսպորտային միջոցը վարձատուին պատկանում է

սեփականության իրավունքով:Սակայն չի ներկայացվել վարձատուին պատկանող Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225 /սեփականության վկայագիրը: Միևնույն ժամանակ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից նշված տեխնիկական միջոցի վերաբերյալ ներկայացվել է թիվ 0001558 տեխնիկական վկայագիրը, ըստ որի,որպես սեփականատեր նշված է << ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ >> ՓԲԸ-ն:

1.2.2 Բացակայում է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը հիմնավորող փաստաթղթերը/աշխատանքային գրքույկների պատճենները/:

2.Գնահատող հանձնաժողովի որոշման մասին:

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1. 2 կետը գնահատող հանձնաժողովը որոշեց.

2.1էլեկտրոնային եղանակով ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին նշված անհամապասխանությունների վերաբերյալ:

2.2 Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-ն որոշման 47-րդ կետի առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել վարձատուին պատկանող Ֆրեզ/Բեռնիչ NEW HOLLAND L225 /սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու իրավունքի վերաբերյալ փաստաթուղթ, ինչպես նաև հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը հիմնավորող փաստաթղթերը /աշխատանքային գրքույկների կրկնօրինակները/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝6, դեմ 0 :

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

<<Բարեկարգում>> տնօրինության տնօրեն՝ Մ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

Էջմ. համայնքապետարանի Քաղաքաշինության և հող օգտագործման բաժնի պետ՝ Դ. Բաղալյան

<<Բարեկարգում>> տնօրինության տնօրենի տեղակալ՝ Հ. Հովհաննիսյան

<Բարեկարգում> տնօրինության <Բարեկարգում և կանաչապատում> տեղամասի պետ՝ Գ. Ֆահլբաշյան

Էջմ. համայնքապետարանի <Բարեկարգում > տնօրինության < Բարեկարգում> տեղամասի տեսուչ Լ. Քոչարյան

Էջմ. համայնքապետարանի Ֆինանսական բաժնի 1-ին կարգի մասնագետ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Էջմ. համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Կ.Խարբերդյան